

25th Anniver.
Shnork Kaloustyan
9/12/1986

ՇՆՈՐՀԻ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Patriarch Shnork Kaloustian

ՅՈՒԲԵԼԵԱՆ-JUBILEE





ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

25-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏԻՒ

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ

ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

ՈՒՐԲԱԹ, 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1986, ԺԱՄԸ 19:30ԻԱ

ՀԱՅԿ ԵՒ ԱԼԻՍ ԳԱՎՈՒՔԾԵԱՆ

ՀԱՆԴԻՍԱՍՐԱՀ

630 SECOND AVENUE

NEW YORK CITY



His Holines Vazken I, Catholicos of All Armenians

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՒՍ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐԷ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՆ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ
ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՔՍԱՆԸՀԻՆԳԱՄԵԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԷՈՑ
ՀԱՐԱԶՍ ՈՐԿՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ
ՈՂԶՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ**

ԻՍԹԱՆԳՈՒՎ

Սիրեցեալ Եղբայր Մեր ի Քրիստոս,

Գոհությիւն Աստուծոյ ամենակալին որ իր կենարար հովանիին ներքեւ անշարժ ու լուսառատ կը պահպանէ մեր Սուրբ Եկեղեցին, որ ահա մօտ հազար եւ եօթ հարիւր տարիներէ ի վեր իր առաքելութիւնը կը շարունակէ իբրեւ մայր դաստիարակը եւ հոգիներու փրկութեան ճանապարհը Հայ հաւատացեալ ազգի:

Այս սրբազան առաքելութեան ճամբուն, մեր օրերուն Ձերդ Ամենապատուութիւնը, Թորքիոյ Հայոց Պատրիարքութեան պատմական Աթոռին վրայ բազմած, քսան եւ հինգ տարիներէ ի վեր Աստուծոյ խօսքը կը քարոզէք ձեր ժողովուրդին, անվտանգ ու պայծառ պահելով Ձեր Աթոռը եւ Ձեր աղօթքի Տունները, մշտապէս հոգեւոր սնունդ եւ լոյս բաշխելով ձեր հաւատացեալներուն:

Ուրախ ենք լոյժ որ ձեր հոգեւոր գաւակները, Աթոռիդ Կրօնական Ժողովոյ նախաձեռնութեամբ, կը պատրաստուին յառաջիկայ տարի տօնախմբելու Ձերդ Ամենապատուութեան քահանայական ձեռնադրութեան յիսունամեակը եւ պատրիարքական պաշտօնավարութեան քսանհինգամեակը արժանավայել հանդիսատրութեամբ:

Մենք մեծ սիրով կ'ողջունենք այդ նախաձեռնութիւնը եւ ընդառաջելով Մեզի եղած 9 Հոկտեմբեր 1985 թուակիր Աթոռիդ Կրօնական Ժողովոյ դիմումին, այսու Մեր կոնդակով կը ներկայացնենք Մեր սրտաբոխ խնդակցութիւնը եւ ամենաջերմ մաղթանքները Ձեր արեւաշատութեան համար, որպէսզի Ձեզի յատուկ հոգեւոր ու եկեղեցաշէն հեղինակութեամբ շարունակէք Ձեր հոգեշէն գործունէութիւնը եւս բազում տարիներ մեր Մայր Եկեղեցոյ անդաստանին մէջ: Մեր եկեղեցին ու համայն հայութիւնը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի Ձեր բարձր անձին մէջ յիսուն տարիներէ ի վեր տեսած են եւ գնահատած բարի հովիւր, նուիրեալ հոգեւորականը, լուսամիտ դաստիարակը, Եկեղեցոյ ազնի սպասաւորը միշտ մաքուր հոգիով, միշտ մաքուր ձեռքերով, Ձեր պաշտօնավարութեան ընթացքին, յերուսաղէմ, ի Լոնտոն, յԱմերիկայի Միացեալ Նահնգներ եւ վերջին քառորդ դարուն Հայոց Պատրիարքական Աթոռին վրայ յԻսթանպուլ:

Թող Աստուած անասան պահէ Ձեր Աթոռն իր եկեղեցիներով ու իր հաւատացեալ ժողովուրդով:

Թող Աստուած Ձեզի պարգեւէ կենաց եւս բազում տարիներ, վերանորոգեալ եռանդ ու ներշնչանք, որպէսզի առաջնորդէք ու մխիթարէք հաւատացեալ ձեր հօտը հոգեւոր արդիւնաւէտութեամբ եւ խաղաղութեամբ:

Այս երջանիկ առիթով բարի եղէք Մեր հայրական օրհնութիւնները բաշխել Աթոռիդ հոգեւոր դասուն, եկեղեցեաց հոգաբարձութեանց, դպրաց դասերուն եւ համայն Հայ հաւատացեալ ժողովուրդին:

Ամենակալն Աստուած «տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իրոց, հաստատել զօրութեամբ ի ձեռն Հոգւոյն իրոյ ի ներքին մարդն, բնակել Քրիստոսի հաւատովք ի սփրոս ձեր, սիրով արմատացեալք եւ հաստատեալք»

(Եփես. Գ 16-17): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



His Eminence Archbishop Torkom Manoogian, Primate

ԻՄԱՍՏՈՒՆ ԵՒ ՔԱԶ ՀՈՎԻՒՐ

Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Ամեն. Ս. Ծնորհք Արք. Գալուստեանի կենսագրական գիծերը կը կարդաք յոբելինական այս գրքոյկին մէջ, եւ կը ծանօթանաք անոր կուսակրօն քահանայ ձեռնադրութեան 50 եւ որպէս Պատրիարք գահակալութեան 25 տարիներու եկեղեցանուէր, ազգանուէր եւ գրական բեղուն գործունէութեանց:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր արձանագրած յաջողութիւններուն գլխատր բարեմասնութիւնները կը նկատենք եկեղեցիին եւ ժողովուրդին ծառայելու իր նուիրումը, իր ուխտին հանդէպ սնուցած հաստատրութիւնը, Հայց. Եկեղեցոյ նուիրապետական կառուցումաձեւին հանդէպ ցուցաբերած նախանձախնդրութիւնը, հոգեւոր եւ ազգային արժէքներու գնահատութիւնը եւ իր համոզումները պաշտպանելու եւ ճշմարտութիւնը բացայայտելու յանդգնութիւնը:

Գրեթէ բոլոր Հայ գաղութներուն մէջ Ամեն. Ս. Ծնորհք Պատրիարքի վայելած անվերապահ սէրն ու յարգանքը արդէն իսկ գրաւականն են իր ունեցած բազմաշնորհ վաստակին:

Պատրիարք Սրբազան Հայրը հովուական ասպարէզին մէջ իր խօսքով, պատգամով եւ գրիչով իրաւ առաջնորդը հանդիսացած է մասնատրապէս իր հօտին եւ ընդհանրապէս Հայ հաստացեալներուն: Հոգեւոր սպասատրի, քարոզիչի, դաստիարակ-ուսուցիչի եւ հեղինակի երկար տարիներու իր ազպարէզը ունեցած է պայքարելու եւ արդիւնատր գործունէութեան շարք մը, ուր ան միշտ ցուցաբերած է հաստքի զօրութիւն եւ ազգային ինքնագիտակցութեան հպարտութիւն:

Անվերապահ գնահատանքով կ'ողջունենք Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Ս. Ծնորհք Արք. Գալուստեանի զոյգ յոբելեանները, եւ փառք կու տանք Աստուծոյ որ Հայց. Եկեղեցոյ պատմական այդ Աթոռին գահակալ բազմեցուցած է ներկայ Պատրիարքին նման իմաստուն եւ քաջ հովիւ մը:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ

ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Անխառն հաճությով և արդար հպարտանքով կ'ողջունենք և կը շնորհատրենք Ամենապատիւ և սիրելի Շնորհք Պատրիարքի աթոռակալութեան քսանհինգամեակը:

Քառորդ դարու շրջանին Շնորհք Սրբազանը արժանատր և իմաստուն պետը հանդիսացաւ Թուրքիոյ Հայ ժողովուրդին՝ դժուարին պայմաններու ներքեւ: Եւ իրաց ներկայի դրութեան մէջ՝ Թուրքիոյ Հայութիւնը, որքան ալ անցեալի իր մեծութեան բաղդատմամբ ամփոփուած և նուազած՝ այնուհանդերձ կարեւոր մէկ մասը կը կազմէ այժմեան Հայաստանէն դուրս սփռուած մեր ժողովուրդի զանգուածին: Անոր կենսունակ և մեր նախնեաց ասանդութեան հաստատրիմ գոյատեւման համար կարելի ամէն ճիգ և աշխատանք մեզի ամենու համար մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ: Այդ նուիրական գործին լծուած՝ Շնորհք Սրբազան գովելի և ուշագրաւ ընթացք կատարեց իր պաշտօնակարութեան ժամանակի երկայնքին: Իր անշէղ ուղղութեան մէջ եղաւ արի, հետեւողական, և պայմաններուն թոյլ տուածին չափով արդիւնատր: Եղաւ ուղղամիտ և անխարդախ քաղաքացի իր երկրին, միաժամանակ պաշտպանելով իր հօտը, գործակցութեամբը հոգեւորական և աշխարհական այն տարրերուն որոնք, գլխատրաբար Իսթանպուլի մէջ, գիտակից նուիրումով միատեղ քալեցին իրենց սիրուած և յարգուած Պատրիարքին հետ: Որովհետեւ Թուրքիոյ Հայ Եկեղեցոյ ժողովուրդը դեռ կը զգայ թէ ինք տեղական ժառանգորդն է երբեմնի հայրենաքնակ և լայնատարած հայութեան ազնուական տեսիլներուն որոնցմով լուսատրուած է մեր պատմութիւնը:

Շնորհք Սրբազան հանդիսացաւ նաեւ իր բարձր կոչումին համապատասխան մտատրական մշակ որ իր պաշտօնը զարդարեց հոգեւոր գրականութեան բարձրորակ և ներշնչական բազմաթիւ հատորներու արտադրութեամբ, և անոնցմով աստուածապաշտութեան և եկեղեցասիրութեան առողջարար սնուղ ջանքեց՝ իրենց քրիստոնէական ասանդութեան հաստատրիմ հայ ընթերցատր հաստացեալներու:

Իր անբասիր նկարագրով և խոհական իմաստութեամբ՝ իր անմիջական հօտին շրջանակէն դուրս՝ Շնորհք Սրբազան վայելեց նաեւ ամբողջ հայ ժողովուրդին յարգանքը և սէրը և կը շարունակէ վայելել արժանատրապէս: Կրնայ արդարութեամբ և իրատամբ կրկնել Սողոմոնի հետ. «Ես յամբժոյթեան իմում գնացի... ոտն իմ կացցէ յուղղութեան»:

Եղաւ անոնցմէ որոնց հոգեւորական նկարագիրը օծուեցաւ Սուրբ Երկրի և սուրբ Քաղաքին տէրունական սրբատեղիներուն խորհրդական ներշնչումներով: Եւ առաջնորդուեցաւ իր Աստուծոյն և իր Ազգին սիրով, հետեւողականօրէն՝ իր գործունէութեան ամբողջ ընթացքին: Երուսաղէմի մէջ, Անգլիոյ մէջ, Ամերիկայի մէջ և հուսկ ապա Կոստանդնուպոլսոյ պատմական Աթոռին վրայ ան միշտ ցոյց տուա իր կոչումին վայել ճշմարտութիւն և ազնուականութիւն: Իր կենդանի խօսքով և իր գրական աշխատութիւններով հասա իր ընթերցողներուն և ճանչցուց անոնց Քրիստոսի Աւետարանին և Հայոց Եկեղեցոյն սէրը և ասանդութեանց յարգանքը:

Իր հոգեւորականի ասպարէզը սկսա իբրեւ մաքրակրօն և աղօթատր վանական և այնպէս ալ մնաց և կը մնայ, լինելով հակադիրը իր անարգ գրպարտիչներուն որոնք «Ոչ ընտրեցին զպատիւ ոգոց անարատից... զի կուրացոյց զնոսա չարութիւն իրեանց...», ինչպէս կ'ըսէ իմաստութիւնը Սողոմոնի:

Շնորհք Սրբազանը ճանչցած եմ այն օրերէն ի վեր երբ ան իր հոգեւորական ընթացքին սկզբնական քայլերը կ'առնէր, մտնելով Երուսաղէմի մեր Սրբոց Յակոբեանց Վանքի Ժառանգատրաց Վարժարանէն ներս ուր եղաւ աշխատատր, կարգապահ և ուշիմ ուսանող և ապա ուխտանուէր «զինուորեալ» միաբան և կուսակրօն քահանայ: Յետ այնորիկ քսան և վեց տարիներ, նախ քան իր Պատրիարքութեան բարձրացումը, քալեց անշէղ և անյողորդ՝ ուղիղ և լուսատր ճանապարհով, միշտ նախանձախնդիր իր պաշտօնին վայելչութեան և հայութեան պատիւին:

Դարու հինգերորդ տասնամեակին վերջին չորս տարիներուն ընթացքին Շնորհք Սրբազան եղաւ Սուրբ Յակոբեանց Միաբանութեան առաջատր անդամներէն, որոնք անյողորդ վճռականութեամբ պայքարեցան պաշտպանելու համար մեր Եկեղեցոյ ներքին և արտաքին չարագործ և կործանիչ ուժերու: Բայց դժբախտաբար Միաբանութեան հատողութեան վեր միջազգային և տեղական քաղաքական ազդակներ պատճառ դարձան որ որոժան գործակալներ տիրանան կացութեան և մեր Եկեղեցոյ այդ փառատր հաստատութիւնը մատնուի հետզհետէ ներկայի անփառունակ և վտանգատր վիճակին:

Շնորհք Սրբազան, հերքելով իր ալեհեր գլխուն երեւութական տպատրութիւնը, կորովով և աշխատունակութեամբ կը կենայ աննահանջ իր պաշտօնի պարտականութեանց պատնէշին վրայ: Եւ մենք արտագին եռանդով կը մաղթենք որ Տէր Յիսուս իրեն շնորհէ տակաւին երկար տարիներ, որպէսզի շարունակէ գործել Հայ Եկեղեցոյ աստուածատունկ այգիին մէջ, որուն առաջատր մշակներէն մին եղած է և կը մնայ:

Սրբազան Առաքել Գրիգոր
ՏՐԻԱՆ ԱՐԲ. ՆԵՐՍԱՅԵԱՆ

ՅՈՒՆԵՍԿՈՒՆ ԶԱՆԶՆԱԽՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Որքա՛ն մեծ հրճուանք է, Նիւ Եորք և շրջակայքի Հայութեան համար, որ այսօր Սեպտեմբեր 12, 1986, Թուրքիոյ Հայոց Հայրախնամ Պատրիարք, Ամեն. Տ. Շնորհք Արք. Գալուստեանի Պատրիարքութեան արժաթեայ յրեւելանը տօնելու կ'արժանանանք, Առաջնորդարանիս Հայկ և Ալիս Գալուստեան Հանդիսատրահին մէջ:

Նորին Ամենապատուութիւնը, Կ. Պոլսոյ նուիրապետական Աթոռին 82-րդ գահակալն է ու արժանընտիր յաջորդը երջանկայիշատակ Տ. Գարեգին Խաչատրեան Պատրիարքին (Տրապիզոնցի, վերջին Արմաշական): Շնորհք Սրբազան խոր հաւատքով ու նուիրումով քսանհինգ տարիէ ի վեր կը գրաւէ պատմական այս Աթոռը, այդ Աթոռին բոլոր դժուարութիւններովն ու ուրախութիւններովը:

1913ին, Սրբ. Պատրիարք Հօր ծննդեան տարիներուն, ազդեցիկ, հզօր ու փառատր էր Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը: Պատրիարքը, Ազգապետն էր ու նոյնիսկ դուրս ձգելով Կիլիկիոյ և Աղթամարի Կաթողիկոսական ու Երուսաղէմի Պատրիարքական Աթոռները, իր վիճակին մէջ կը հաշուէր, Արքեպիսկոպոսական 14 վիճակ, Եպիսկոպոսական 27 վիճակ, վանական 8 վիճակ և Տեսչական 2 թեմ: Ընդհանուր 177 թաղ, 1641 Եկեղեցի ու 1,460.000 հայադասանք կը հաշուէր:

Այսօր ի՛նչ մնաց: Դառն ճակատագիր՝ 33 Եկեղեցի Պոլսոյ մէջ, 7 Եկեղեցի գաւառի մէջ ու 60,000 հայութիւն միայն:

Սակայն, դարձեալ այս նուիրապետական Աթոռը հոն է, իր հիմնադրութեանէն ճիշդ 525 տարիներ յետոյ, դարձեալ կենսունակ, կորովի, աշխոյժ ու պայծառ և կը սփռէ լոյս, մեր հոգիներէն ներս: Փառք օրուայ գահակալին, Տ. Շնորհք Արք. Գալուստեան Սրբազանին, զոր այսօր կը մեծարենք:

Նորին Ամենապատուութիւնը, 25 տարիէ ի վեր, իր ամբողջ Էութեամբը նուիրուեցաւ այս պաշտօնին: Իր առաքինի կենցաղով օրինակ հանդիսացաւ համայն հայութեան ու փայլ տուա բարձր Աթոռին: Հակառակ չափազանց դժուարին պայմաններու, զարկ տուա մշակոյթի, շինարարութեան, բարոյական ու ընկերային դաստիարակութեան:

Երանի՛ Կ. Պոլսոյ հայութեան, որ ունեցաւ աստուածատր շնորհներով լի Պատրիարք Արք. մը, յանձին Տ. Շնորհք Արք.ի, որուն հովուական հովանին ու հայրական խնամքը կը վայելէ 25 տարիէ ի վեր ու Տիրոջ կամօք դեռ պիտի վայելէ բազում տարիներ ես:

Երանի՛ ձեզի սփիւռքի հայրենակիցներ, որ անցեալին ու այժմ տուիք ձեր լուսնները, Ամեն. Պատրիարք Հօր բարեսիրական, կրթական նպատակներուն համար: Դուք՝ ջանացիք վեր առնել իր ծանր լուծը ու թեթեւցնել իր խաչը. երանի՛ ձեզի:


25-ամեայ յրբելեանը, պանծալի հանգրուան մըն է: Կ. Պոլսոյ Պատրիարքական Պատմութեան մէջ՝ 81 Պատրիարքներէ երկուքը միայն 25 տարի կամ աւելի գահակալած են: Առաջինը, (թիւ 49) Տ. Յովհաննէս Թ. Կոլոտ Բաղիշեցի, Տիտան, երջանկայիշատակ Պատրիարքն է (1715-1741) իսկ երկրորդը (թիւ 55) Տ. Զաքարիա Կաղզուանցի մեծահամբաւ և կրթատր պատրիարքը, որ կարճ ընդհատումով պաշտօնավարած է, ընդհանուր 25 տարի: Նախ 8 տարի (1773-1781) ապա 17 տարի (1782-1799):

Ուստի սիրելի ներկաներ, երանի մեզի: Երանի՛, որ Սփիւռքի մէջ, Տ. Շնորհք Արք.ի, Կ. Պոլսոյ արժանաընտիր Պատրիարքին Արժաթեայ Յրբելեանը կրցանք նախատօնել, իր իսկ ներկայութեամբ ու Ս. Աջն առնելու պարգեւին արժանացանք:

Սրբ. Պատրիարք Հայր՝ այս երջանիկ առիթով հանձնէք ընդունիլ մեր շնորհատրութիւններն ու բարեմաղթանքները:

Տէրը՛ թող ամուր և անսասան պահէ նուիրապետական Կ. Պոլսոյ Աթոռը ու Զերդ Ամենապատուութեան՝ մշտական կենսունակութիւն և արեւշատութիւն պարգեւէ:

Որդիական ակնածանօք՝
Մատչիմ ի համբոյր Զերդ Ս. Աջոյն,
Պերճ Արազ
Ատենապետ Յրբելիական Յանձնախումբի



His Beatitude Archbishop Shnork Kaloustian

Տ. ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՅ ԹՈՒՐԿԻՈՅ

Կենսագրական գիծեր

Ամենապատիւ Տ. Ծնորհք Արք. Գալուստեան ծնած է 1913-ին՝ Իշտէ-Եօզղատ: Ասագանի անունով կը կոչուի Արշակ: Իրենց գիւղի հարուստ եւ ազդեցիկ ընտանիքներէն մէկուն զաւակը եղած է: Հայրը կոչուած է Միհրան, իսկ մայրը՝ Ծուշան: Երկու տարեկան հասակի մէջ որբացած է իր հօրմէն: Իր նախնական կրթութիւնը սկսած է Կեսարիոյ մօտիկ Թալասի Ամերիկեան որբանոցին մէջ: 1922ին ամբողջ որբանոցով Ամերիկացի միսիոնարներու կողմէ տարուած է նախ Պէշրուք, ապա Պաղեստինի Նազարէթ քաղաքը, ուր աւարտած է իր նախակրթութիւնը տեղւոյն Ամերիկեան որբանոցին մէջ:

1927 Յուլիս 14ին մտած է Երուսաղէմի Ժառանգատրաց վարժարանը եւ կարճ ժամանակի մէջ ուշագրա դարձած է իր ուշիմութեամբ եւ աշխատասիրութեամբ:

Վարժարանի շրջանը յաջողութեամբ ասարտելէ յետոյ, 1932ին Սարկաւազ ձեռնադրուած է: Ընծայարանի եռամեայ շրջանը ասարտելէ ետք, 1935ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ Երուսաղէմի հոգեւոյնս պատրիարք Տ. Թորգոմ Արք. Գուշակեանի - Արմաշական -, վերակոչուելով Տ. Ծնորհք Արեղայ: Վանքին մէջ վարած է գաւնագան պաշտօններ. եղած է գաւազանակիր՝ Տ. Թորգոմ Պատրիարքի, ուսուցիչ՝ վանքի Սրբոց Թարգմանչած վարժարանի, ապա 1936ին Ներքին Տեսուչ Ժառանգատրաց Վարժարանի: Այս տեղ կարճ պաշտօնավարութենէ մը յետոյ, 1937ին նշանակուած է տեսուչ Սրբոց Յակոբեանց տպարանին եւ փոխ խմբագիր «Սիոն» պաշտօնական ամսագրի:

Եղած է անդամ Ա. Աթոռոյ Տնօրէն Ժողովի, հոգեւոր հովիւ Հայֆայի եւ շրջակայից: 1941ից Տեսուչ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Անթիլիասի Դպրեվանքի, պաշտօն՝ գոր վարած է մինչեւ 1944ի ամառը: 1945ին նշանակուած է հոգեւոր հովիւ Լոնտոնի Հայոց: 1948ին անցած է Ամերիկա, որպէս հովիւ Նիւ Ծրրզի նահանգի Նուվարգ եւ Բեթըրսըն քաղաքներուն: Հրատարակած է «Կանթեղ» անուն կրօնական թերթիկ մը: 1950-52ին վարած է Ամերիկայի Առաջնորդարանի պաշտօնաթերթ



Տիրացու Արշակ Գալուստեան

«Հայաստանեայց Եկեղեցի»ի խմբագրությունը
եւ եղած է անդամ Թեմական Խորհուրդի:

1952ին Գերշն. Ս. Տիրան Արք. Ներսյ-
եանի ձեռամբ ստացած է Ծայրագոյն Վար-
դապետի աստիճանը, երբ ընտրուած էր Ա-
ռաջնորդ Ամերիկայի Արեւմտեան Թեմի:

1954ին Գալիֆորնիոյ Ասգ. Երեսփոխա-
նական Ժողովը գնահատելով իր աշխատան-
քը, Եպիսկոպոսական աստիճանի բարձրաց-
ման համար դիմած է Ա. Էջմիածնի:

1855 Հոկտեմբերին ձեռնադրուած է
Եպիսկոպոս Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթո-
ղիկոսի կողմէ, Ա. Էջմիածնի մէջ, միաբա-
նակից չորս եպիսկոպոսներու հետ: Գերշն. Ս.
Շնորհք Արք. կը գլխավորէր միաժամանկ
Գալիֆորնիոյ թեմի պատգամատրութիւնը Ա.
Էջմիածնի մէջ, Վազգէն Ա.ի ընտրութեան
ընթացքին:

1956ին Երուսաղէմ հրաւիրուած է տեղ-
ւոյն Պատրիարքարանին կողմէ, ուր ստանձ-
նած է Սուրբ տեղեաց Վերահսկիչի պաշտօնը:
Իսկ Մարտ 25ին Պատրիարքական ընտրու-
թիւններէ յետոյ, միաբաններու կողմէ
ընտրուած է Լուսարարապետ Երուսաղէմի Ա.
Աթոռոյ: 1960ի սկիզբը ծանօթ պարագաներու
բերումով ստիպուած է հեռանալ Երուսաղէմէն
եւ Ամերիկա վերադարձի ճամբուն վրայ, երբ
Պոլիս հանդիպած է հոգեւոյն Գարեգին Խա-
չատուրեան Պատրիարքի փափաքով երկա-
րաձգած է իր բնակութիւնը քաղաքին մէջ:
Այդ միջոցին է որ ունեցած է երջանկութիւնը՝
վերատեսնելու իր մայրը, 38 տարուան բա-
ժանումէ մը ետք:

Հոգեւոյն Պատրիարքի վախճանումէն
յետոյ, Ս. Շնորհք Եպսկ. Գալուստեան, 11
Հոկտեմբեր 1961ին, Թուրքիոյ Հայոց Պատ-
գամատրական Ժողովին կողմէ, որ կազմուած
էր 72 Իպթամպոլի, 7 Անատոլոյի գաւառներու
եւ 10 եկեղեցական պատգամատրներէ, միա-
ձայնութեամբ ընտրուած է Պատրիարք Թուր-
քիոյ Հայոց, որպէս 82րդ Գահակալը Պատ-
րիարքութեան այս դարատր Աթոռին:

Ամեն. Ա. Պատրիարք Հայրը, իր ընտ-
րութենէն անմիջապէս յետոյ, Աթոռանիստ
Մայր Եկեղեցոյ լուսաշող կամարներուն տակ,
Պատգամատրական Ժողովի եւ ծովածաւալ
բազմութեան ներկայութեան, արտասանած է
իր սրտառոյ առաջին ուղերձը, «Համեստու-
թեան եւ Իմաստութեան» նշանաբանով:

Ամենապատիւ Ա. Պատրիարք Հօր գա-
հակալութիւնը տեղի ունեցած է 1962 Յուն-
ուար 3ին փառահեղ հանդիսատրութեամբ:



Շնորհք Արղ. Գալուստեան


Այդ առթիւ կարդացած է իր պատրիարքական
ուխտը, եւ ստացած է պատրիարքական Ա-
սան: Պատրիարքութեան աթոռը բարձրանալէ
ետք, ստացած է Արքութեան տիտղոս Վազ-
գէն Ա. Կաթողիկոսի կողմէ:

Իր պատրիարքութեան 25 տարիներու
ընթացքին, Շնորհք Արք. ունեցած է բազ-
մաթիւ շինարարական գործունեութիւններ,
որոնցմէ գլխավորները կը հանդիսանան չորս
վարժարաններու - Գատըգիւղ, Կէտիք Փաշա,
Գում Գաբուսի Դրսի եւ Սամաթիոյ ի հիմանէ
վերակառուցումը: Կարեւոր նորոգութիւններու
ենթարկուած են գրեթէ բոլոր Իպթամպոլահայ
վարժարանները բոլորն ալ Կիւլպէնկեան Հիմ-
նարկին նուիրատրութիւններով: Ի հիմանէ
նորոգուած են նաեւ Ղալաթիոյ Ա. Գրիգոր
Լուսատրիչ, Նսուրը Գաբուսի Ա. Յովհաննէս եւ
Ռումելի Հիսարի Ա. Սանդուխտ եկեղեցիներն
ու այլ հաստատութիւններ: Գրեթէ առանց
բացատրութեան նորոգուած են Իպթամպոլի 33
եկեղեցիները եւ գաւառի եօթը եկեղեցիներէն
չորսը:

Ամեն. Ս. Շնորհք Արք. Գալուստեան
երիցս այցելած է Անատոլոյի մէջ ցրուած Հայ
համայնքներուն. իսկ զանազան անգամներ
այցելած է արտասահման, թէ Մայր Աթոռոյ
Միտոնօրհնութեանց, Եպիսկոպոսական ժո-
ղովոց եւ այլ հանդիսութեանց մասնակցե-
լու, եւ թէ կրթական ու մարդասիրական
նպատակներու համար արտասահմանի Հա-
յոց նուիրատրութիւնները ընդունելու:

22 Սեպտեմբեր 1973ին, Պէյօղլոյի Ա.
Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ կազմակեր-
պուած փառատր հանդիսութեամբ մը Ա. Ղա-
զարի Ասպնջական Ասպետներու Խաչ-Ծքա-
նըշանը շնորհուած է Թուրքիոյ Հայրախնամ
Պատրիարքին: Տուուչութիւնը կատարուած
է Ասպետներու Նախագահ Պարոն Էտմոնտ
Ֆօն Համմելրփի ձեռամբ, որ շնորհատրական
ուղերձ մը արտասանած է անգլիերէն լեզուով:
Ա. Ղազարի Ասպնջական Ասպետներու կրօ-
նական Հաստատութիւնը հիմնուած է Երու-
սաղէմի մէջ 1125 թուականին: Այս առթիւ
Ամեն. Պատրիարք Հայրը իր քարոզին մէջ
ըսած է հետեւեալը. «Խաչերը միշտ ծանրա-
ծանր պարտականութիւններու խաչեր չեն, ա-
նոնց մէջ թեթեւներն ու հաճելիներն ալ կան»:

Ամեն. Ս. Շնորհք Արք. Գալուստեան
եղած է գրասէր եւ մշակութասէր պատրիարք
մը: Իր բարձր հովանատրութեամբ ջատագով
հանդիսացած է Իպթամպոլահայ բոլոր մշա-
կութային ձեռնարկներուն, գրական, գիտա-



Շնորհք Արղ. Գալուստեան

կան եւ գեղարուեստական գետիներու վրայ:
Ամենապատիւ Սրբազան Պատրիարք
Հօր հրատարակած կարգ մը գիրքերն են.

- 1.- Ձեռագիրներու գողութեան գայթակղութիւնը - Իսթանպուլ 1969
- 2.- Նկատողութիւններ Երուսաղէմի Յանձնաժողովի Տեղակազրի մասին - Իսթանպուլ 1970
- 3.- Մեծ Պահքի Կիրակիներու Ոսկիներու շրթան - Իսթանպուլ 1971
- 4.- Գունագեղ Կիրակիներ եւ Հոգեգալուստ - Իսթանպուլ 1972
- 5.- Միութիւնը եւ Միասնութիւնը կը կազմեն Եկեղեցիի Էութիւնը - Իսթանպուլ 1973
- 6.- Ասագ Ծաբաթ - Պէլրոյթ 1974
- 7.- Տաղասար Տօներ - Երուսաղէմ 1976
- 8.- Եօթը Պատգամներ եօթը եկեղեցիներու - Իսթանպուլ 1977
- 9.- Աստուածաշնչական Սուրբեր - Իսթանպուլ 1977
- 10.- Համաքրիստոնէական Սուրբեր - Իսթանպուլ 1978
- 11.- Հայագի Սուրբեր - Իսթանպուլ 1981

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- Չորս Աւետարաններ - Իսթանպուլ 1966-1967
- 2.- Ընդհանրական Թողթ Ներսէս Ընդհանրալիի - Իսթանպուլ 1973
- 3.- Յիսուս Որդի - Իսթանպուլ 1974
- 4.- Աստուծոյ Կանչը - Իսթանպուլ 1980

Երջանկայիշատակ Գարեգին Պատրիարք Խաչատուրեան, 1952 տարույ սկիզբը հիմը դրած է «Շողակաթ» ամսօրեայ հանդէսին, որ շարունակուած է մինչեւ 1958 թուականը: Ամեն. Տ. Ընդհանր Արք. Գալուստեան շարունակած է հրատարակել այս հանդէսը, պարբերաբար կամ տարեգիրքի վերածելով զայն, անոր մէջ տեղ տալով զանազան օգտաշատ նիւթերու: Այս գիծով լոյս ընծայած է տասը արժէքատր հատորներ:

Լոյս ընծայած է նաեւ Ներսէս Ընդհանրալի, Կողոտ Բաղիշեցի եւ Յակոբ Նալեան պատրիարքներու յուշագրքոյններ, գունատր ու գեղեցիկ տպագրութեամբ, պանծացնելով անոնց երախտաշատ գործունէութիւնը:

Քսանեհինգ տարիէ ի վեր Թրքահայութիւնը կը վայելէ հովուական հովանին՝ Ամենապատիւ Տ. Ընդհանր Արք. Գալուստեանի, որ իր հոգեւորականին երկնատուր շնորհներով արժանատր գահակալը եղաւ այս Պատրիարքական Աթոռին:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, եկեղեցիի եւ մշակոյթի ճամբով միշտ ջանաց իր ժողովորդին ջամբել շինարարական աշխատանք,



Ընդհանր Արք. Գալուստեան

ժողովորդային միասնութիւն, հոգեւոր, բարոյական եւ ընկերային դաստիարակութիւն:

Նորին Ամենապատուութիւնը քսանեհինգ տարիներ որպէս հոգեւոր առաջնորդ օրինակ հանդիսացաւ ժողովորդին, իր առաքինի կենցաղով, պատկասազրու կեցուածքով եւ դէպքերը դիմակալելու անշողորդ կամքով:

Նորընտիր Պատրիարք Տ. Ընդհանր Արք. Գալուստեան, 11 Հոկտեմբեր 1961ին, իր ընտրութենէն անմիջապէս յետոյ, Պատգամատրական ժողովի ու ծովածառայ բազմութեան ներկայութեան, արտասանած էր այս ուղերձը, Գումգարու Աթոռանիստ Մայր Եկեղեցոյն մէջ:

Հատուածք Առաջին Ուղերձէն

«... Պատկասելի Պատգամատրական ժողովի ցոյց տուած այս գրեթէ միահամուռ վստահութիւնը, պահ մը գէթ մոռցնել կուտայ ինձի իմ տկարութիւնս եւ կը ներշնչէ ինձի համարձակութիւնը, որ կարենամ «այդ» ըսել ինձի ուղղուած բարձրագոյն այս առաջարկին:

«Եւ ձեր բազմութեան ձայնին մէջէն լսելով նաեւ արձագանգը Աստուծոյ կոչին, կը խոնարհեցնեն պարանոցս այն նոյնական լուծին ներքեւ, զոր այս պահուն կը դնէք իմ տկար ուսերուս վրայ»:

Մեկնաբանութիւնը «պաշտօն» բառին իսկ իմաստին

«... Ընդհանրալի եմ, ըսի, արտայայտուած վստահութեան եւ բարի զգացումներուն համար. Բայց նոյն բանը չեմ կրնար կրկնել ինձի վստահուած պաշտօնին համար: Ուղիղ ըմբռնումով՝ պաշտօնները պարգեւներ չեն որ աջ ու ձախ բաշխուին եւ որոնց փոխարէն ենթակաները շնորհակալ ըլլան: Պաշտօն բառը ամէնքս ալ գիտենք, կը նշանակէ ծառայութիւն, բառին ո՛չ թէ բարոյական կամ այլաբանական իմաստով, այլ իսկական եւ բառական իմաստով: Այս իմաստով՝ հանրային պաշտօնները -բարձրագոյնէն մինչեւ ամենախոնարհները- եւ կը նկատեն լորջ եւ պատասխանատու ասպարէզներ, որոնց հնարատրութեան սահմանին մէջ արդարութիւն պէտք է ընէ ենթական:

«Գիտակցելով հանդերձ, թէ լիովին եւ ամբողջապէս կարելի պիտի չըլլայ արդարութիւն ընել ինձի վստահուած նոյնական այս պաշտօնին, սակայն գէթ կրնամ իմ կարգիս վստահեցնել ձեզ մէկ կէտի մասին. ծառայութեան բարձրագոյն այդ դիրքին վրայ՝ եկեղեցոյ սպասատրութեան գանձանակին մէջ պիտի դնեմ ամբողջ ունեցածս, «գոյի չափ զկեանս իմ», թէ իսկ այդ ունեցածս երկու լումայի կամ երկու քանքարի արժէք ներկայացնէ. Աստուծոյ ուզածը եւ գնահատուածն ալ գիտեմ թէ այս է. եւ վստահ եմ թէ Աստուծոյ Եկեղեցիին, որ դուք էք, ուզածն ալ տարբեր պիտի չըլլայ»:

HIS BEATITUDE ARCHBISHOP SHNORK KALOUSTIAN

Patriarch of the Armenians in Turkey

A biographical sketch

His Beatitude Archbishop Shnork Kaloustian was born in 1913, in Ighdeh, province of Yozgad Turkey. His baptismal name was Arshag. His parents Mihran and Shoushan Kaloustian were fairly wealthy and influential in their hometown. Upon the death of his father he was orphaned at the age of two. He was accepted in the American missionary orphanage in Talas, province of Kayseri, where he received his primary education. In 1922 the American missionary with its orphanage moved to Beirut and then to Nazareth, Palestine. Arshag stayed with that orphanage until his graduation from the primary school.

The studious young Arshag was admitted into the Seminary of the Patriarchate, in Jerusalem. Following his graduation in 1932, he was ordained deacon. Subsequently, upon the conclusion of his higher religious courses, in 1936 he was ordained celibate priest by the late Patriarch Torkom Koushagian, of blessed memory, with a new name, Father Shnork. He served in the Patriarchate in various capacities: he taught in St. Tarkmanchats Armenian School, then he was appointed as the dean of the Seminary: in 1937 the young priest assumed the assistant editorship of "Sion", the official magazine of the Patriarchate.

For three years, 1941-1944, Father Shnork Kaloustian served as the pastor of the Armenians in Haifa and environs. In 1944 he was entrusted the prestigious post of the deanship of the Antelias Seminary. While at Antelias he accepted a new assignment in London, England, as pastor of the local Armenians.

His religious activities in the U.S.A. began in 1948, with the assumption of the pastorship of Newark and Paterson Armenian Church, simultaneously, in the meantime serving as editor of "The Armenian Church", the official magazine of the Diocese. He was elected as member of the Diocesan Council. In 1952, Arch. Tiran Nersoyan then the Primate bestowed upon Father Shnork Kaloustian the honor of Dzayrakuyn Vartabed. Soon after that he was elected as Primate of California, of the Western Diocese of the Armenian Church. In 1955, he was elevated to the rank of bishop by his Holiness Vazken I, Catholicos of All Armenians, in Holy Etchmiadzin.

In 1956, Bishop Shnork Kaloustian returned to Jerusalem where he was elected as Grand Sacristan of the Patriarchate, and he served for three years in that capacity. On his way back to U.S.A. His Grace, stopped over in Istanbul to meet the Patriarch, Arch. Karekin Khatchadourian. Upon the request of the Patriarch, Bishop Kaloustian extended his stay in Istanbul, and it was at this time he met his mother for the first time after 38 years. It was a moving encounter. While in Istanbul the ailing Patriarch passed away, Bishop Kaloustian was presented as a potential candidate, for the vacate Patriarchal See, 72

delegates from Istanbul, proper, and from the inner provinces with their 10 churches, in the Assembly on Oct. 11, 1961 unanimously elected Bishop Kaloustian as the next Patriarch of the Armenians in Turkey. Thus he became the 82nd titular of the centuries old See of Constantinople. Upon his election, His Holiness Vazken I bestowed upon him the title of Archbishop.

In his 25 years as Patriarch, Arch. Kaloustian has accomplished a great number of achievements worth mentioning. In addition to undertaking major repairs at the 33 churches in Istanbul, and at four out of seven sanctuaries in Anatolia, The Patriarch undertook tedious and long pastoral visitations to his flock dispersed in several provinces of Anatolia. Sometimes unsuccessful he has tried to enroll Armenian youngsters at various Armenian schools. He has spent great efforts to expose these children to the teachings of the Armenian schools. He has spent great efforts to expose these children to the teachings of the Armenian church and make them aware of their ethnic heritage. Many of them however have become very successful in business and have received college education. He has also made many visitations abroad and was always welcomed by the Armenians in the Diaspora.

On September 22, 1973, in a ceremony conducted at the Holy Trinity Church in Istanbul, Mr. Edmond von Hammer, knight of the Hospitable and Military order of Jerusalem, founded in 1120 presented the Patriarch with the distinguished order of the Holy Cross. This was indeed a great honor bestowed upon the Patriarch.

Archbishop Shnork Kaloustian is the author of many books on religious, philosophical and moralistic themes. He has also translated several works into Armenian.

Established in 1952 by the late Patriarch Arch. Karekin Khachadourian the monthly magazine "Shoghagat" was published until 1958. Arch. Kaloustian assumed the editorship and continued the publication in a different format, with many interesting articles on religion, philosophy and history.

The Armenian Patriarchate of Istanbul has published several books: The Patriarchs, Nerses Shnorhali; Golod Paghishetzi; Hagop Nalian; etc.

For a quarter of a century, the Armenians in Turkey are living under the spiritual leadership and pastoral guidance of the Patriarch Shnork, who has become a source of inspiration for the maintenance of their ethnic background and christian heritage. Through the teaching of the Church and his cultural endeavor, Arch. Kaloustian, as Patriarch, has always tried to nurture unity among his flock, setting the example of moral values and spiritual achievements in his community.

As we are gathered here to celebrate the 25th anniversary of his enthronement, we express our love, respect and support, wishing him a long and healthy life, that the historic and centuries old Patriarchal See of Istanbul may stay active and viable under his paternal guidance for many years to come.



Ամենապատիւ Տ. Ծնորիք Արք. Գալուստեան 1976-ին
Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ:



Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ Առաջնորդին՝
Եսրովոս Արք.ին եւ Գերշ. Տ. Թորգոմ Արք.ին հետ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական պօռոիկն Սիւս Էջմիածին փոխադրուելուն գրեթէ ժամանակակից է, Կոստանդնուպոլսոյ պատրիարքական պօռոի մը սկզբնատրոյթինը: ՄԷՏԷՄԷԼՈՒ Բ. Ֆաթիհ, Օսմանեանց թագաւոր, կայսրոյթեան մայրաքաղաքը գրաւելէն ետքը պետք ունեցաւ արմատական կարգադրոյթին մը ընել Յոյներուն հպատակոյթինը ապահովելու համար: Օսմանեան օրէնտրոյթինը ամբողջապէս կրօնական կամ իսլամական էր, եւ բոլոր անհատական եւ ընտանեկան եւ կենցաղական իրաւունքները, բացարձակապէս մահմետական կրօնքին սկզբունքներէն ներկնուած էին: Ասկէ առաջ իսլամ պետոյթինները քրիստոնէական երկիրներ նուաճած առեւնին, երկու պայմաններէն մէկուն հետեւելու պարտատրուած էին. կա՛մ իրենց կրօնքը բռնի ընդունիլ տալ իրենց նուաճած ժողովուրդներուն, եւ կամ անոնց ինքնուրոյն կառավարոյթին եւ յատուկ կենցաղական կացոյթին մը շնորհել: Արդ այս երկու պայմաններէն ոչ մէկը կը յարմարէր Կոստանդնուպոլսոյ, որ նորահաստատ իսլամական մայրաքաղաքը կը հռչակուէր: ՄԷՏԷՄԷԼՈՒ Ֆաթիհ այդ դժուարոյթինը լուծեց, Յոյներու կրօնական պետին, այսինքն է պատրիարքին թողլով այն ամէն կենցաղական եւ քաղաքական իշխանոյթինները, որոնք ներքին եւ սերտ կապակցոյթին ունէին քրիստոնէական կրօնքին վերաբերեալ կետերուն հետ: Այս կեպով կրօնական պետին իրաւատրոյթեան ներքեւ անցան այն ամէն խնդիրներ եւ գործեր, որոնք կը պատկանին քրիստոնէաներու ընդհանուր կեանքին, ամուսնական խնդիրներուն, ընդհանուր դաստիարակոյթեան, բարեգործական հաստատոյթեանց, կրօնական պահանջից, եկեղեցական պաշտօնէից, կրօնապատկան գործոց, եւ այլն: Այսպէս ծագում առաւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն քաղաքական իշխանոյթեան կամ կայսերական պատրիկոյթեան նման կերպարան մը առանալը (1453):

Աշխարհակալ թագաւորը, այս կերպով Յոյներուն կացոյթինը ճշդելէ ետքը, մտածեց անոնց դիմացը ուրիշ քրիստոնէական տարր մըն ալ կազմակերպել, տարր մը որ աւելի կապուած է իրեն տէրոյթեան շահերուն: Բազմաթիւ Հայ գաղթականոյթին մը փոխադրեց Կոստանդնուպոլիս քաղաքը, եւ զայն գետեղեց քաղաքին շրջանակի թաղերուն մէջ, պարիսպներուն ներքեւ ու գլխատր դուռներուն մօտ: Միեւնոյն առիթով, իբրեւ առաւել վստահոյթեան միջոց, Յոյները հաւաքուեցան քաղաքին մէջտեղը, աշտարակներէն եւ ամրոյթիններէն հեռու: Արդէն ալ Հայերը՝ Օսման Ա. Պազի թագաւորին օրէն, Թուրքերուն կատարեալ վստահոյթինը կը վայելէին: Այս աթիւ նոր Հայ գաղթականոյթինը Յոյներուն համար կազմակերպուած ձեւին եւ դիրքին վերածուեցաւ: Յովակիմ եպիսկոպոս, որ Փոքր Ասիոյ մէջ գտնուող Հայ գաղթականներու առաջնորդն էր, եւ Կոստանդնուպոլսոյ անցած էր, Պրուսայէ Կոստանդնուպոլիս փոխադրուեցաւ, եւ ստացաւ միեւնոյն աստիճանն ու պատուանունը, իշխանոյթինն ու իրաւատրոյթինը (1561), որոնք Յոյներուն պատրիարքին տրուած էին:

Այս կերպով կառավարոյթեան ճանչցած, Յոյն եւ Հայ երկու պատրիարքները նկատուեցան արեւելեան քրիստոնէութեան երկու մեծ հատուածներուն գլխատր պետերը: Այս բաժանումը հիմնուեցաւ պարզապէս հաստոյ դասանութեան տարբերութեանց վրայ, սոհմային կամ ազգային տարբերութեանց տեսակետէն անկախաբար: Որչափ Երկաթնակ Օրդոտոքներ կային, Յոյն, Պուլկար, Սըրպ, Առնատուտ, Ուլաֆ, Պուղտան, Ռուբէն, Խրուաթ, Գարամանցի, Ատրի, Մելքիդ, Արաբացի, ամէնքն ալ իրենց ժողովուրդներով եւ պետերով Յոյն պատրիարքին ներքեւ դրուեցան: Միս կողմէն ալ որչափ Միաբնակ ուղղափառներ կային, Հայ, Վրացի, Աղուան, Ատրի, Քաղղէացի, Ղպտի, Հապէշ, ամէնքն ալ իրենց ժողովուրդներով եւ պետերով ենթարկուեցան Հայ պատրիարքարանի իրաւատրոյթեան:

Կոստանդնուպոլսոյ Հայ պատրիարքները սկսան հետզհետէ իրենց իշխանոյթինը կազմակերպել եւ իրաւատրոյթինները կեդրոնացնել, եւ հնարատրոյթեան սահմանին մէջ՝ իրենց ձեռքը ամփոփել ազգային ամբողջ վարչոյթինը: Իրենց վարչական գործունէութիւնը հետզհետէ տարածուեցաւ կայսրութեան բոլոր գաւառներուն վրայ, նոյնիսկ հոգեւորապէս՝ Սոյո եւ Աղթամարայ կաթողիկոսութեանց եւ Երուսաղէմի պատրիարքութեան պատկանեալ թեմերուն վրայ:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ

Այս գրույթին ներքեւ կու տանք Թուրքիոյ Հայոց Պատրիարքներու անուններու շարքը, եւ 525 տարուան գլխաւոր դէպքերու շարաշարութիւնը կարելի ամենէն համա-
նօտ ձեւի տակ: Յարդ գահակալած 82 պատրիարքներէն շուրջ քառորդը երկիցս կամ
աւելի անգամներ պաշտօնի բարձրացած եւ իջած են: Եկեղեցոյ հնաւանդ կարգաց
հակառակ այս երեւոյթը կը նշմարուի յոկ Պոլսոյ Աթոռակալներու պարագային, եւ
անոնցմէ ընդօրինակուելով՝ կարճ ժամանակի մը համար (1650-1680) նաեւ Երուսա-
ղէմի Աթոռակալներու վրայ: Այնպէս որ 525 տարուան մէջ Կ. Պոլսոյ 82 պատրի-
արքներ 113 անգամ գահակալութիւն ունեցած են:

- 1.- Տ. Յովակիմ Եպիսկոպոս Պրուսացի (1461-1478):
- 2.- Տ. Նիկողայոս Եպիսկոպոս (1478-1489):
- 3.- Տ. Կարապետ Եպիսկոպոս (1489-1509):
- 4.- Տ. Մարտիրոս Եպիսկոպոս (1509-1526):
- 5.- Տ. Գրիգոր Եպիսկոպոս (1526-1537):
- 6.- Տ. Աստուածատուր Վարդապետ (1537-1550):
- 7.- Տ. Ստեփանոս Վարդապետ (1550-1561):
- 8.- Տ. Տիրատուր Կաթողիկոս Սսեցի (1561-1563):
- 9.- Տ. Յակոբ Եպիսկոպոս (1563-1573):
- 10.- Տ. Յովհաննէս Եպիսկոպոս Տիարպէքիի (1573-1581):
- 11.- Տ. Թովմաս Եպիսկոպոս Գաղատիոյ (1581-1587):
- 12.- Տ. Սարգիս Եպիսկոպոս Ուլմիոյ (1587-1590):
- 13.- Տ. Յովհաննէս Բ. Եպիսկոպոս (1590-1591):
- 14.- Տ. Ազարիա Կաթողիկոս Սոյ Ջուղայեցի (1591-1592):
- 15.- Տ. Սարգիս Բ. Եպիսկոպոս Պարոն Տէր Զէյթունցի (1592-1596):
- 16.- Տ. Մելքիսեդիկ Կաթողիկոս Գառնեցի (1599-1600):
- 17.- Տ. Յովհաննէս Խոյ Կոստանդնուպոլսեցի (1600-1601):
- 18.- Տ. Գրիգոր Բ. Կեսարացի (1601-1608) (1611-1621) եւ (1623-1626):
- 19.- Տ. Զաքարիա Վանեցի (1626-1631):
- 20.- Տ. Դաիթ Արեւելցի (1640-1641), (1643-1644), (1644-1649), (1650-1651):
- 21.- Տ. Կիրակոս Երեւանցի (1641-1642):
- 22.- Տ. Խաչատուր Սեբաստացի (1642-1643):
- 23.- Տ. Թովմաս Բ. Բերիացի (1644) եւ (1657-1659):
- 24.- Տ. Եղիազար Այնթապցի (1651-1652):
- 25.- Տ. Յովհաննէս Դ. Մուղնեցի (1652-1655):
- 26.- Տ. Մարտիրոս Բ. Քէֆեցի (1659-1660):
- 27.- Տ. Ղազար Սեբաստացի (1660-1663):
- 28.- Տ. Յովհաննէս Ե. Թուրքմանի (1663-1664) եւ (1665-1667):
- 29.- Տ. Սարգիս Գ. Թէքիրտաղցի (1664-1665):
- 30.- Տ. Ստեփանոս Բ. Մեղրեցի (1670-1674):
- 31.- Տ. Յովհաննէս Զ. Ամասիացի (1674-1675):
- 32.- Տ. Անդրէաս Ստամպուլցի (1675-1676):

- 33.- Տ. Կարապետ Բ. Կեսարացի (1676-1679):
- 34.- Տ. Սարգիս Դ. Էքմէքճի (1679-1680):
- 35.- Տ. Թորոս Ստամպուլցի (1681- հազիւ 40 օր կը տեւէ):
- 36.- Տ. Եփրեմ Ղափանցի (1684-1686), (1694-1698) եւ (1701-1702):
- 37.- Տ. Խաչատուր Բ. Ճլեցի (1688-հազիւ 7 ամիս):
- 38.- Տ. Մատթէոս Վրդ. Կեսարացի (1692-1694):
- 39.- Տ. Մելքիսեդեկ Բ. Սուպի (1698-1699) եւ (1700-1701):
- 40.- Տ. Միսիթար Քիրտիստանցի (1699-1700):
- 41.- Տ. Աւետիք Եղոկիացի (1702-1703):
- 42.- Տ. Գալուստ Կայծակն Ամասեացի (1703-1704):
- 43.- Տ. Ներսէս Պալաթցի (1704: Վախճանած է 1741ին):
- 44.- Տ. Մարտիրոս Գ. Երզնկացի (1706-1706):
- 45.- Տ. Միքայէլ Խարբերոցի (1706-1707):
- 46.- Տ. Սահակ Ապուշեցի (1707 (1708-1714):
- 47.- Տ. Յովհաննէս Է. Իզմիրցի (1707-1708):
- 48.- Տ. Յովհաննէս Ը. Գանձակեցի (1714-1715):
- 49.- Տ. Յովհաննէս Կոլոտ (1715-1741):
- 50.- Տ. Յակոբ Բ. Նալեան Զմմարացի (1741-1748) եւ (1752-1764):
- 51.- Տ. Պրոխորոն Սիլիստրեցի (1749):
- 52.- Տ. Միմաս Կաթողիկոս Ակնեցի (1749-1751):
- 53.- Տ. Գեորգ Գ. Պամմաճեան Կոստանդնուպոլսեցի (1764-1773):
- 55.- Տ. Զաքարիա (Կաղզուանցի) (1773-1781) եւ (1782-1799):
- 56.- Տ. Յովհաննէս Ժ. Համատանցի (1781-1782):
- 57.- Տ. Դանիէլ Սուրմառեցի (1799-1800):
- 58.- Տ. Յովհաննէս Զամաչքրճեան Բաբերոցի (1800-1801) (1802-1813):
- 59.- Տ. Գրիգոր Խամսեցի (8011-1802):
- 60.- Տ. Աբրահամ Գօլեան Տաթեւացի (1813-1815):
- 61.- Տ. Պօղոս Գրիգորեան Անդրիանուպոլսեցի (1815-1823):
- 62.- Տ. Կարապետ Գ. Պալաթցի (1823-1831):
- 63.- Տ. Ստեփանոս Բ. Աղաւնի Զաքարեան (1831-1839) եւ (1840-1841):
- 64.- Տ. Յակոբոս Գ. Սերոբեան (1839-1840) եւ (1848-1858):
- 65.- Տ. Աստուածատուր Բ. Կոստանդնուպոլսեցի (1841-1844):
- 66.- Տ. Մատթէոս Բ. Զովհաննէան Կ. Պոլսեցի (1844-1848):
- 67.- Տ. Գեորգ Բ. Քերէթեճեան Կ. Պոլսեցի (1858-1860):
- 68.- Տ. Սարգիս Ե. Գույումճեան Արրիանուպոլսեցի (1860-1861):
- 69.- Տ. Պօղոս Բ. Թագթազեան Պրուսացի (1863-1869):
- 70.- Տ. Իգնատիոս Գազմաճեան Իսթանպուլցի (1869-1869):
- 71.- Տ. Մկրտիչ Խրիմեան Վանեցի (1869-1873):
- 72.- Տ. Ներսէս Բ. Վարժապետեան (1874-1884):
- 73.- Տ. Յարութիւն Վեհապետեան (1885-1888):
- 74.- Տ. Խորէն Աշրգեան (1888-1894):
- 75.- Տ. Մատթէոս Գ. Իզմիրլիան Իսթանպուլցի (1894-1896):
- 76.- Տ. Մաղաքիա Օրմանեան Իսթանպուլցի (1896-1908):
- 77.- Տ. Եղիշէ Դուրեան Իսթանպուլցի (1909-1911):
- 78.- Տ. Յովհաննէս Արշարունի Իսթանպուլցի (1912-1913):
- 79.- Տ. Զաւէն Եղիազեան Պաղտատցի (1913-1915) եւ 1919-1922):
- 80.- Տ. Մեսրոպ Նարոյեան Մշեցի (1927-1944):
- 81.- Տ. Գարեգին Խաչատուրեան Տրապիզոնցի (1951-1966):
- 82.- Տ. Ընդրիք Գալուստեան Եօզկատցի կ'ընտրուի 1961 Հոկտեմբեր 11ին:



Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը 1974-ին
 Ս. Վարդան Մայր Տաճարէն ելքի պահուն:



Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը 1974-ին
 Ս. Վարդան Մայր Տաճարի մէջ Ս. Հաղորդութիւն տուած պահուն:

SPECIAL BENEFACTOR

\$5000

— Mr. & Mrs. Alex Manoogian ✓

BENEFACTOR

\$1000

- Mrs. Alice Kavookjian ✓ 1,500
- ✓ Ariadne Galleries, Inc. - ~~PLEDGE~~
- ✗ Dr. & Mrs. Paul Z. Bedoukian - PLEDGE
- Constantinople Armenian Relief Society, Inc. ✓
- Mr. & Mrs. E. George Dabagian ✓
- Mr. George Gurdjian ✓
- Holy Cross Tbrebank Alumni, Inc. ✓
- Miss Leila Karagheusian ✓
- Mrs. Dolores Z. Liebman ✓
- Mr. & Mrs. Edward Mardigian ✓
- Mr. Rupen L. Saddler ✓
- Mrs. Louise Simone ✓
- ~~TELEL~~ ✓
- ~~KYACHTADIAN~~ ✓

PATRON

\$500

- ✓ Essayan-Getronagan Alumni, Inc. ~~PLEDGE~~
- The Gomidas Choir ✓
- Mr. & Mrs. Dikran Missirlian (Manhasset) ✓
- St. Leon's Armenian Church Senior Citizens Center ✓
- St. Mary Armenian Church of Livingston ✓
- Mr. & Mrs. Henry Saruhan ✓
- Pan Sebastia Rehabilitation Union, Inc. ✓

SPONSOR \$200

- Mr. & Mrs. Berc Araz ✓
- Mr. & Mrs. Martin Z. Boyajian ✓
- Dr. & Mrs. Levon M. Capan ✓
- Mr. & Mrs. Krikor Gosgarian ✓
- Dr. & Mrs. Berdj Harabedian ✓
- Anonymus ✓
- Mr. & Mrs. Haig H. Kazazian ✓
- Mr. & Mrs. Zaven A. Kish ✓
- Mr. & Mrs. Nurhan Manukian ✓
- Mr. & Mrs. Stepan Minakyan ✓
- Mr. Hayg A. Seferian ✓
- Mr. & Mrs. John A. Sirabian ✓
- Mr. Hovsep Tahmazian & Sister ✓

3,500

Deris Manukian
Vahagn Nisoghosian

SUPPORTER \$100

- *Bebbie Eshejian*
- Armenian National Hospital Union of Boston, Inc. — \$100
- Dr. Lori & Jean-Marie Atamian — \$100
- Victoria Balakian
- Edward G. Bashian & Sons, Inc. ✓
- Dr. Armand E. Bedikian ✓
- Mr. & Mrs. Hrant Candan ✓
- Ms. Araxie Cherishian ✓
- Dr. & Mrs. Arto Demirjian (Montreal) ✓
- Mr. Shahan Erguder ✓
- Dr. & Mrs. Ararat P. Gezurian *
- Mrs. Dikranouhi Hajinlian ✓
- Rev. Fr. Carnig Hallajian ✓
- Mr. & Mrs. Fran Kabarajian ✓
- Col. & Mrs. Carnig Kay ✓
- Mr. & Mrs. Kenneth Kradjian ✓
- Mr. Artin Korogluyan ✓
- Mr. Gregory Manuelian ✓
- Mr. R. Manuelyan ✓
- New York University Armenian Club ✓
- Mr. & Mrs. Ara Oltaci (Montreal) ✓
- Dr. & Mrs. Nikit Ordjanian ✓
- Mr. & Mrs. Setrak Terpanjian ✓
- Mr. & Mrs. Yervant Terpanjian ✓
- Mr. Hagop S. Touloukian ✓
- Women's Guild of St. Mary Armenian Church, Livingston, N.J. ✓
- Mr. & Mrs. James N. Yacoobian *
- Dr. & Mrs. Hampar Yazijian ✓

Nazap Zachi

Glysehian

Narout Mozounian

Keval Aileli

R. Marti

Anna Yazij

Halvajian

S. Hagan

Manousshag Bostonian ✓
Dr. Charles Shakerian ✓

ASSOCIATE-SUPPORTER \$50

- *Sherehan Barmakian* ✓
- Mr. & Mrs. Kurken Anac ✓
- Mrs. Nevart Badishkian ✓
- Mr. & Mrs. Vahan Bakalian ✓
- Mr. Karl Barsamian ✓
- Mr. & Mrs. Ghazaros-Dikranouhi Bodossian ✓
- Ms. Anahid Bojekian ✓
- Dr. & Mrs. Garbis Cankosyan ✓
- Mr. Karabet Caparyan ✓
- Marie & Avedis Derounian ✓
- Mrs. Rose Dinkjian ✓
- Dr. & Mrs. Robert Dorian ✓
- Mr. & Mrs. H. Ermarkarian ✓
- Dr. & Mrs. Edgar M. Housepian ✓
- H.S. Jelalian ✓
- Malvine Kurkjian ✓
- Azniv Manukian ✓
- Miss Armen Matossian ✓
- Mr. & Mrs. Arthur Muradyan ✓
- Mr. & Mrs. James Noorigian ✓
- Mrs. Silva Polatoglu ✓
- Mr. Levon Simonyan (Montreal) ✓
- Mr. & Mrs. Kevork Tchobanian ✓
- Mr. & Mrs. Diran Tookmanian ✓

Rene Abderian

Janji

FRIEND

- Ms. Armine Dikjian ✓ \$25
- A. Selian ✓ \$25
- Mr. & Mrs. Stephen Tutunjian ✓ \$15
- Mr. Avedis Yazicioglu ✓
- Mr. & Mrs. P. Zaybekian ✓
- Michel Shahinian ✓
- Mrs. Azadouhi Stepanian ✓ \$10
- Ms. Dovie Tilbian ✓
- Mrs. Mariam Attarian Bryer ✓
- Jack & Alice Keurian ✓ \$10
- Mr. Misak Terzian ✓
- Mr. Gregory Kelesh ✓

V. Sarinian

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA

HIS EMINENCE ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

with the participation of

ARMENIAN-AMERICAN SUPPORT & EDUCATIONAL CENTER

CONSTANTINOPLE ARMENIAN RELIEF SOCIETY, INC.

ESSAYAN-GETRONAGAN ALUMNI, INC.

THE GOMIDAS CHOIR

TIBREVANK ALUMNI

CELEBRATE

THE 25TH JUBILEE BANQUET HONORING

HIS BEATITUDE ARCHBISHOP SHNORK KALOUSTIAN

PATRIARCH OF ISTANBUL

HONORARY MEMBERS OF THE COMMITTEE

Varoujan Arslanian

Dr. Paul Z. Bedoukian

E. George Dabagian

Torkom Demirjian

George Gurjian

Mrs. Bogos Horasanci

Alice Kavookjian

Berj Khachadourian

Dolores Liebman

Alex Manoogian

Edward Mardigian

Rupen Saddler

Louise Simon

Dr. Jirayr Tezel

MEMBERS OF THE COMMITTEE

Fr. Khajag Barsamian *Vicar General*

Berc Araz *Chairman*

Hirant Gulian *Co-Chairman*

Krikor Anoushian *Secretary*

Armine Dikijian *Public Relations*

Hacatur Ermarkaryan *Treasurer*

Nora Martayan *Treasurer*

Frank Kabarajian *Booklet*

Berj Khachadourian *Fund Raising*

Henry Saruhan *Fund Raising*

Setrak Terpanjian *Dinner Chairman*

Armine Araz

Varoujan Arslanian

Manug Ayden

Ared Bulbuljian

Migirdich Demirjian

Torkom Demirjian

Zakar Dikme

Sebuh Dosttur

Avedis Gazarian

Dr. & Mrs. Antranik Hazarian

Hamayak Hovnanian

Avedis Kasakyan

Haroutioun Koroglian

Anny Khoubesserian

Dr. Ashod Krikorian

Sirpuhi Mark

Shahan Nazar

Susan Saruhan

Hagop Uryan